

ՊԱՏԺԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Կ. Ա. ԼԱԼԱՅԱՆ

Պատժի ուսմունքի մասին քրեաիրավական պրոբլեմները բազմազան ու բազմաբնույթ են: Դրանց ամբողջական լուծումը տալու հավանությունը չունենալով հանդերձ, կարևոր ենք համարում պատժի բնույթին ու նպատակին վերաբերող որոշ հարցերի լուսաբանումը, նկատի ունենալով նաև, որ այսօր կանգնած ենք նոր քրեական օրենսդրության ընդունման նախաշեմին:

Հասարակության զարգացման պատմության մեջ քրեական պատիժը երբեք ինչ-որ վերացարկված, մտացածին երևույթ չի եղել: Այն միշտ որոշակի իրավական համակարգի մասն է կազմել: Պատժի տեսակները և նրա ամբողջ համակարգը արտացոլել են հասարակության զարգացման տարբեր փուլերը, հասարակարգի պահանջմունքներն ու շահերը: Պատիժները միշտ էլ համապատասխանել են հասարակության կուլտուրական, գաղափարական, քաղաքական, տնտեսական և այլ հայացքներին: Այդ տեսակետից մարդկային հասարակության զարգացմանը, նրա հայացքների փոփոխմանը զուգընթաց փոփոխվել են նաև քրեական պատիժների բնույթն ու համակարգը: Ծթի, օրինակ՝ հնագարում և միջնագարում տիրապետող հայացքներին համապատասխանել են պատժի դաժանությունը, կատարված հանցագործության և պատժի անհամաչափությունը, պատժի կիրառման անմարդկային եղանակները (քառահատում, անվահարում, խոշտանգում, անդամահատում և այլն), ապա մարդկության զարգացման ավելի բարձր մակարդակներում դրանց բնույթը փոփոխվել է: Բայց, շնայած դրան, այստեղ էլ ժամանակ առ ժամանակ հանցագործությունների աճին (հատկապես ծանր) կրկին ու կրկին հակադրվել է դաժան պատիժների համակարգը՝ կարծես՝ դառնալով հանցագործությունների դեմ տարվող պայքարի միակ արդյունավետ ուղին:

Ինչ խոսք, հանցագործությունների դեմ արդարացի պատժի կիրառումն անհրաժեշտություն է, սակայն դա պայքարի միջոցներից մեկն է, այլ ոչ թե միակը: Ընդ որում, պատժի արդյունավետությունը պետք է չափվի ոչ թե նրա դաժանությամբ, այլ անխուսափելիությամբ: «Ամբողջ աշխարհում, — նկատել է քրեագետ Ա. է. Ժալինսկին, — բավարար ապացույցներ չկան այն մասին, թե պատժի ուժեղացումը կամ մեղմացումը համապատասխանաբար փարե՛նպատ կամ բացասական ազդեցություն են թողնում հանցագործությունների նախադրույթման վրա»¹: Առավել ևս աշխարհին հայտնի դաժան պատժահամակարգերից և ոչ մեկը չի հանգեցրել այնպիսի արդյունքների, որին սպասել են դրա օրենսդիրները: Ընդհակառակը, եթե պատիժը, բացի հանցագործության համար մեղքի քավումից, մարդասիրական նպատակներ չի հետապնդում, ապա այն կարող է վերաճել իր հակադրության: Պատիժը պետք է օգտակար լինի հասարակությանը, քանի որ, նախ այն հանցագործությունների դեմ պայքարի անհրաժեշտ միջոցներից է և երկրորդ՝ համարվում է հանցագործություն կատարած անձանց ուղղելու և վերադաստիարակելու միջոց: Հետևապես, այն կարող է լինել խիստ բայց ոչ դաժան, քանզի հասարակության իրավական հոգեբանության ձևավորման և կոնկրետ մարդկանց դաստիարակելու տեսակետից դաժանությունը, բացի վնասից, օգուտ չի կարող բերել:

Դարերի փորձը ցույց է տվել, որ այս կամ այն հանցագործության համար պատժի դաժանացումը ժամանակավորապես է ազդել տվյալ հանցագոր-

¹ А. Э. Жалпский, Социально-правовое мышление: проблемы борьбы с преступностью. М., 1989, с. 29—30.

ծուծյան տեսակի նվազեցման վրա, քանի որ այն, ինչ հոգեկան աշխարհի վրա ազդում է քիչ թե շատ երկար ժամանակ, լինի զա ամենահաճելի թե ամենասոսկալի երևույթը, անխուսափելիորեն սովորական է դառնում²։ Այդ էն վկայում նաև վիճակագրական տվյալները։ Օրինակ, ուսումնասիրելով 1945—1965 թթ. ընթացքում քննված և Հայաստանի ժողդատարանների ու Գերագույն դատարանի արխիվներում գտնված դիտավորյալ սպանությունների վերաբերյալ թվով՝ 258 քրեական գործերը, պարզել ենք, որ 1954 թ. ապրիլի 30-ի հրամանագրով այդ հանցագործության համար մահապատիժ սահմանելուց հետո (1947 թ. մայիսի 26-ի հրամանագրով մահապատիժը, որպես պատժատեսակ, ընդհանրապես վերացված էր), 1955—1960 թթ. դիտավորյալ սպանություն կատարած անձանց թիվը նախորդ հինգ տարիների համեմատությամբ նվազել է 0,03 %-ով, մինչդեռ 1961—65 թթ. ընթացքում՝ այն կրկին աճել է 3,1 %-ով։

Այսօր աշխարհի 26 երկրներում մահապատիժ է նախատեսված թմրաբիզնեսով զբաղվողների համար (ԱՄՆ, Չինաստան, Իրաք, Իրան, Հնդկաստան, Թաիլանդ, Թայվան, Քուվեյթ, Սաուդյան Արաբիա և այլն)։ Բայց միևնույն է, այդ հանցագործության տեսակը գնալով աճում, այլ ոչ թե նվազում է։ 1967 թ., երբ Սաուդյան Արաբիան մահապատիժ սահմանեց թմրաբիզնեսի համար, սկզբում այդ հանցագործությունների թիվը կիսով չափ նվազեց, սակայն 1993 թ. այն կրկին աճեց և կրկնապատկվեց։ Այնպես որ, ամենասարսափելի պատիժն, անգամ հարցը չլուծեց։ Բացի այդ, ինչպես երևում է ուսումնասիրություններից, պատժի դաժանությունը ծնում է նաև հանցագործության դաժանություն։ Ընդհանրացնելով միջնադարյան անմարդկային պատժական քաղաքականությունը, իտալացի հանրահայտ քրեագետ Չեզարե Բեկարիան գրում է. «Այն ժամանակներում և այն երկրներում, որտեղ եղել են ամենադաժան պատիժները, կատարվել են և՛ ամենաարյունալի, և՛ ամենաանմարդկային արարքները, որովհետև զազանային նույն այն ոգին, որն առաջնորդել է օրենսգրի ձեռքը, շարժել է նաև և՛ հայրասպանի, և՛ ավազակի ձեռքը»³։

Իհարկե, սխալ կլիներ կարծել, թե ընդհանրապես պատժի սպառնալիքը որևէ նշանակություն չունի։ Այն դեր է խաղում մարդկանց մի մասի նկատմամբ, բայց կարող է ներազդող լինել միայն այն պատիժը, որը հատուկ է տվյալ հասարակարգին, ընկալվում է նրա կողմից և չի հակասում նրա հայացքներին։ Այսօր դրանք (հայացքները) արտացոլվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածի այն ճշմարիտ պահանջի մեջ, ըստ որի՝ «մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի»։ Կարծում ենք, սահմանադրության այս պահանջը վերաբերում է ոչ միայն մարդուն ընդհանրապես, այլև հանցագործություն կատարած անձին և հանցագործության համար նրա նկատմամբ պատիժ սահմանելու հարցերին՝ մասնավորապես։ Այս տեսակետից մեր օրենսդրությամբ դաժան պատիժների ընդունումը առնվազն հետադարձ կլինի դեպի միջնադար։

Պետք է նշել, որ պատժի մարդասիրական սկզբունքները արտահայտվել են նաև ԱՊՀ մասնակից երկրների միջպառլամենտական ասամբլեայի խորհրդում՝ 1995 թ. մայիսի 13-ին ընդունված քրեական օրենսգրքի մոդելի 10-րդ հոդվածում։ Դրա 2-րդ կետում նշված է, որ հանցագործություն կատարած անձի նկատմամբ պետք է նշանակվի այնպիսի պատիժ կամ քրեաիրավական ներգործության այլ միջոց, որը բավարար ու անհրաժեշտ լինի նրա ուղղման և նոր հանցագործությունները նախազգուշացնելու համար։ Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն, պատիժը կամ քրեաիրավական ներգործու-

² И. И. Карпец, Наказания, Социальные правовые и криминологические проблемы, М., 1973, с. 115.

³ Чезаре Беккариа. О преступлениях и наказаниях, М., 1939, с. 310.

թյան այլ միջոցը մարդկային արժանապատվությունը ստորացնելու և ֆիզիկական տանջանքներ պատճառելու նպատակ չունի⁴։

Այստեղից երեւում է, որ պատիժը հետապնդում է երկու նպատակ՝ ա) ուղղել հանցագործություն կատարած անձին և բ) նախազգուշացնել նոր հանցադրոշմությունների կատարումը (պատժի ընդհանուր նախազգուշացման նպատակ)⁵։

Թվում է, թե պատժի միայն երկու նպատակների մասին նշելով, տուրք է տրվել այն քրեագետների կարծիքներին, որոնք, փոխհատուցումը պատժի նպատակ չհամարելով հանդերձ, դրա կողմնակիցներին մեղադրում էին կանոնական (եկեղեցական) իրավունքի ոգին քրեական իրավունք ներմուծելու մեջ⁶։ Սակայն մոդելի 45-րդ հոդվածում արդեն նշվում է, որ պատիժը դատարանի դատավճռով նշանակվող պետական հարկադրանքի միջոց է (մեղքի քավում)⁷, ե այն կիրառվում է սոցիալական արդարությունը վերականգնելու, ինչպես նաև դատապարտյալին ուղղելու և նոր հանցագործությունների կատարումը նախազգուշացնելու նպատակով։

Այսպիսով, ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի, հիշատակված մոդելում պատժի նպատակ է համարվել նաև սոցիալական արդարություն վերականգնումը, որը, սակայն, չպետք է հասկանալ հանրահայտ թուրախ՝ «Այն ընդ ական, ատամն ընդ ատաման» սկզբունքի առումով։ Մոդելի 45-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ պատիժը կիրառվում է հանցագործության մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ և վերը նշված նպատակներին հասնում է քրեական օրենքով նախատեսված զրկանքների կամ իրավունքների ու ազատությունների սահմանափակման միջոցով։

Այդ բոլորը ճիշտ համարելով հանդերձ, անհասկանալի է, թե ինչու պատժի նպատակների մի մասը «մարդասիրական սկզբունքներ» անվան տակ նախատեսվել է օրենսգրքի նախադրի 10-րդ հոդվածում, իսկ մյուս մասը՝ 45-րդ հոդվածում, այն դեպքում, երբ դրանք մեկը մյուսին լրացնող նույն երևույթի բովանդակությունն են, և հենց այդ նպատակների մեջ են դրսևորվում պատժի մարդասիրական սկզբունքները։ Առանց դրանք մասնատելու, կարծում ենք, նոր օրենսգրքի մեջ կարելի է տալ պատժի հասկացության հետևելի սահմանումը. «Պատիժը դատարանի դատավճռով նշանակվող պետական հարկադրանքի միջոց է (մեղքի քավում), որը սոցիալական արդարությունը վերականգնելու, դատապարտյալին ուղղելու և նոր հանցագործությունների կատարումը կանխելու (ինչպես իր, նույնպես և ուրիշների կողմից) նպատակով կիրառվում է հանցագործության մեջ մեղավոր անձի նկատմամբ, քրեական օրենքին համապատասխան՝ զրկելով կամ սահմանափակելով նրա իրավունքներն ու ազատությունները»։

Պատիժը կամ քրեական-իրավական ներգործության այլ միջոց մարդկային արժանապատվությունը ստորացնելու և ֆիզիկական տանջանքներ պատճառելու նպատակ չունի»։

4 Информационный бюллетень, СПб, 1995, № 8, с. 122.

5 Չնայած մոդելի նշված հոդվածում չի հիշատակվել դատապարտյալների կողմից նոր հանցագործությունների կատարումը կանխելու մասին, սակայն ակնհայտ է, որ դա ևս մտնում է պատժի նպատակի մեջ և այն ընդունված է անվանել պատժի մասնավոր կամ հատուկ նախազգուշացման նպատակ։

6 М. Д. Шаргородский, Вопросы общей части уголовного права, Л., 1955; Н. А. Стручка, Проблемы наказания в проектах общесоюзного и республиканского уголовного законодательства (Советское государство и право, 1958, № 6).

7 Մեղքի քավումը օրենսգրքի մոդելում գործածված ոտսերեն «Кара» բառի թարգմանությունն է, որը բառացիորեն մեղքի քավում չի նշանակում։ Միևնույն ժամանակ «искупление вины» արտահայտությունն է «Кара» և «искупление вины» հասկացությունները շատ մոտ են, բայց դրանք նույնը չեն։ Ուրեմն, այս թարգմանությունը չպետք է հասկանալ տառացիորեն։ Պարզապես հայերենում այն քաղաքացիության իրավունք է ստացել։

Ա. սպիտակ սահմանումն ընդգրկում է պատժի բոլոր հատկանիշները, հատկապես այն, որ պատժը, հայտնի չափով, հատուցում է կատարվող հանցագործության համար: Մի կողմ թողնելով քրեագետների տարիներ շարունակվող վեճը պատժի «հատուցման հատկանիշի մասին», նշենք, որ քրեական պատժը ամէշտ էլ հատուցում է կատարված հանցագործության հսկար և այն դատապարտյալին պատճառում է որոշակի զրկանքներ ու տառապանքներ: Պատժվողին ազատութունից զրկելը, նրան հասարակութունից մեկուսացնելը, որոշակի առումով ռեժիմի կիրառումը, գույքային և այլ իրավունքների ու շահերի սահմանափակումները հարկադրանքի այն միջոցներն են, որոնցով ֆիզիկական և հոգեկան տանջանքներ ու զրկանքներ են հասցվում պատժվողին (բացառիկ դեպքերում զրկում են նաև կյանքից): Անտեսել պատկառելի անխուսափելի հատկանիշը, նշանակում է անտեսել նաև ռեալ իրականությունը: Բայց միաժամանակ հարց է առաջանում, թե մինչև որ սահմանը պետք է նորմատիվ սահմանափակումներ մտցնել անհատական ակտերի համար, մինչև որ սահմանը պետք է դատապարտյալին ենթարկել զրկանքների ու տառապանքների, որպեսզի նա ուղղվի և վերադաստիարակվի:

Փորձենք պատասխանել այդ հարցին:

Այնպիսի հարկադրանքի տեսակ, ինչպիսին մահապատիժն է, պարզ է, որ անձին ուղղելու կամ դաստիարակելու նպատակ չի հետապնդում: Ակրնհայտ է նաև տանջանքներ պատճառելու նրա էությունը: Այն մասնավոր նախազգուշացման նպատակ ևս չունի, քանի որ կյանքից զրկված մարդը ոչ մեկի և ոչ էլ մյուսի կարիքը չի զգում: Պատժի այդ տեսակի նպատակը մեկն է՝ կյանքից զրկելու սպառնալիքով ահաբեկել ուրիշներին՝ ղերծ մնալու ծանր հանցագործություններ կատարելուց:

Սկզբունքորեն դեմ լինելով մահապատժին, պետք է ընդունել, սակայն, որ ներկա պայմաններում, երբ երկիրը գտնվում է տնտեսական շրջափակման մեջ, առկա են թշնամի տարրերի ներթափանցման հնարավորություններ, չեն նվազում շահագիտական շարժառիթներով և այլ ստոր գործումներով կատարվող դիտավորյալ սպանությունները, նման պատժամիջոցի կիրառումն անհրաժեշտություն է: Իհարկե, չի կարելի մարդասիրական համարել այն, ինչն իր իսկ էությամբ մարդասիրական չէ, սակայն, մարդկանց և հասարակության շահերից ելնելով, ժամանակավորապես և հազվագյուտ դեպքերում կարելի է և հրաժարվել այդ սկզբունքից: Բայց դա պետք է իրականացվի խիստ բացառիկ և առանձնապես ծանր որոշ հանցագործությունների դեպքերում: Հայաստանի դատական պրակտիկայի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Գերագույն դատարանն այսօր ցուցաբերում է հենց նման մոտեցում: Վերջին հինգ տարիների ընթացքում կարելի է հիշել միայն 1—2 դեպք, երբ հանցագործների նկատմամբ կալաքվել են մահապատժի դատալծիոներ:

Կարծում ենք, այդպիսի մոտեցում պետք է ժառանգի նաև քրեական օրենսդրությունը, բացառելով իր նախորդի՝ այժմ գործող քրեական օրենսգրքի սկզբունքները, որտեղ նույնիսկ մահապատիժ էր նախատեսվում առանձնապես խոշոր հափշտակությունների համար և դրանով մարդու կյանքն ու իրա կողմից ստեղծվող գույքը հավասարեցվում միմյանց: Ի դեպ, այդ օրենսգրքերը մահապատիժ է նախատեսում 35 հանցագործությունների համար, այն դեպքում, երբ մարդկության պատմության մեջ ամենադաժան համարվող Համալուրաբու օրենսդրությունը մահապատիժ է նախատեսել 30 դեպքերում, Կարողինան՝ 44, Ռուսաստանում կիեյան մեծ իշխանի օրենսդրությունը՝ 10 դեպքերում⁸ և այլն:

Ժամանակակից պատժական քաղաքականությունը և քրեական օրենսգրքերը պետք է բնորոշվեն նրանով, որ երբ հնարավոր է առանց նման հատուցման ապահովել պատժի նպատակների իրականացումը՝ ասենք՝ ազա-

⁸ Տե՛ս Ա. Ա. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, Որևան, 1962, էջ 497:

տաղրկման կամ այլ ներգործության միջոցներով, ապա պետք է նախապատվություն տալ դրանց: Ճիշտ է նկատել Վոլտերը, որ հանցագործություն կատարած անձը, որը ամբարտաւաններ է կառուցում երկիրը շրհեղեղից փրկելու համար, ջրանցքներ է հորում կամ վարակված ճահճներ է շորացնում, սկստությանը ավելի մեծ ծառայություն է մատուցում, քան թե դա կարող էին անել սյունից կախված կմախքը կամ անվահարված մսի կտորները⁹:

Պատժի մարդասիրական սկզբունքին խստորեն հակադրվում է նաև ցմահ ազատազրկումը, ինչպիսի պատժատեսակ առաջարկվում է վերը նշված քրեական օրենսդրւթի մոդելի 59-րդ հոդվածով: Եթե, որոշ հանգամանքներից ելնելով, բացառիկ դեպքերում մահապատժի կիրառումն ընդունելի է, ապա ցմահ ազատազրկումն անընդունելի է, քանի որ այն մարդուն անվերջ տառապանքներ ու տանջանքներ պատճառելու նպատակ է հետապնդում: Այսպիսի պատժը, բացի ուրիշներին ահաբեկելուց, ոչ մի այլ նպատակ չունի: Նա ոչ ուղղում է հանցագործին և ոչ էլ վերադաստիարակում: Եվ ում համար է ուղղվելու մարդը, եթե իր ամբողջ կյանքում պետք է ապրի հասարակութունից մեկուսացված՝ հատուկ ռեժիմի գաղութում կամ բանտում: Վաղուց է ապացուցված, որ ազատազրկման երկարատև ժամկետը, առավել ևս ցմահ ազատազրկումը, հանգեցնում է պատժի արդյունավետության թուլացմանը, քանի որ դատապարտյալը, շտեմնելով իր ազատման ռեալ հեռանկարը, կորցնելով բոլոր տեսակի հույսերը կյանքի նկատմամբ, ավելի է չարանում և ձեռք է բերում վայրենություն և ոչ թե մարդկային հատկանիշներ:

Բացի այդ, 15 տարի, գուցե և որոշ առանձնապես ծանր հանցագործությունների ու վտանգավոր ռեցիդիվիստների համար 20 տարի ազատազրկումը արդեն բավականին մեծ ժամկետ է ուղղիչ-աշխատանքային ներգործության բոլոր միջոցներն ու մեթոդները կիրառելու համար: Եթե այդ ընթացքում անձը չի կարողացել իրեն հաշիվ տալ իր վարքագծի բացասական կամ դրական ազդեցությունների մասին, եթե այդ ժամկետում հնարավոր չի եղել ուղղիչ աշխատանքային ներգործության նույնանման մեթոդների կիրառմամբ հասնել դրական արդյունքների, ապա պետք է մտածել այդ մեթոդների փոփոխման, այլ ոչ թե ազատազրկման ժամկետի երկարացման մասին: Այս վերջինի դեպքում պատժական մեխանիզմի պահպանման համար առաջանում է նաև հսկայական ծախսերի անհրաժեշտություն, և ինչքան երկար է դրա ժամկետը, այնքան մեծանում է այդ ծախսերի չափը, որն ի վերջո ապարդյուն է, քանի որ ցմահ ազատազրկումը, անմարդկային պատժատեսակ լինելով հանդերձ, բացառում է թե՛ ուղղվելու և վերադաստիարակվելու հեռանկարը և թե՛ հենց դատապարտյալի կողմից դրան հասնելու ձգտումը:

Գուցե մեզ առարկեն, թե նման պատժատեսակն անհրաժեշտ է հանցագործություն կատարելուն հակված անձանց ահաբեկելու և պատժի ընդհանուր կանխիչ նպատակը իրականացնելու առումով, ճիշտ այնպես, ինչպես դա արվում է մահապատժի կիրառման ժամանակ: Վերջինիս մասին մեր նկատառումներն արդեն շարադրել ենք: Ինչ մնում է պատժի ահաբեկման հատկանիշին, ապա 15 կամ 20 տարի ազատազրկումը նույնպես զուրկ չէ այդ տարրից: Եվ, վերջապես, պատժի ընդհանուր կանխիչ դերն իրականացվում է ոչ միայն հասարակության անկայուն տարրերին ահաբեկելու եղանակով, այլև պատժի տեսակափոխության հասարակական համոզմունք ստեղծելու միջոցով, որն ի դեպ, ավելի կարևոր դեր է խաղում հանցագործությունների կանխման գործում, քան ահաբեկումը: Հանցագործությունը կանխող ամենագործուն միջոցներից մեկը, — նշել է Զեզարե Բեկարիան, — ոչ թե պատժի դաժանությունն է, այլ նրա անխուսափելիությունը¹⁰:

Հանցագործությունների դեմ տարվող պայքարում կարևոր նշանակություն ունի բոլոր հանցագործությունները մերկացնելն ու անպայման պատժելը, հենց դա է պատժի անխուսափելիությունը: Դրա հետ միասին կարևոր-

⁹ Вольтер, Избранные страницы, СПб., 1914, с. 113.

¹⁰ Կ. Беккарна, նշվ. աշխ., էջ 308—309.

վում են նաև դատարանների կողմից հիմնավորված դատավճիռների ընդունումն ու դրանցով նշանակված պատիժների ռեալ կիրառումը:

Հանցագործությունների դեմ տարվող պայքարի հարցում քրեագետները, հաճախ առաջնությունը տալով հանցագործի անձի և քրեածին գործոնների ուսումնասիրությանը, անտեսում են հասարակության համար այն վնասակար հետևանքները, որոնք առաջանում են հանցագործությունների անպատժելիության փաստերից: Անպատիժ մնացողը ոչ միայն ինքն է կատարում նոր հանցագործություններ, այլև օրինակ է ծառայում իր հետ փոխհարաբերությունների մեջ գտնվող այն անձանց համար, որոնք հակված են այս կամ այն հանցագործությունը կատարելուն: Այս դեպքում արդեն պատժի դաժանությունը կամ խստությունը գրեթե նշանակություն չի ունենում:

Իհարկե, հանցագործությունների դեմ պայքարը չի կարելի հանգեցնել միայն պատժի անխուսափելիության ապահովմանը, ինչպես որ այդ հարցում չի կարելի քերականահատել կամ գերազնահատել քրեական պատժի դերը: Պատժի արդյունավետությունն ու անխուսափելիությունը միայն պայմանավորված կարելի է դիտել որպես ինքնուրույն մեծություններ: Իրականում արդյունավետությունը կամ, ավելի ճիշտ, դրան հասնելու աստիճանը որոշվում է տվյալ բնագավառում օգտագործվող սոցիալ-տնտեսական միջոցների հարաբերակցության մեջ: Հանցագործության դեմ տարվող պայքարի, հետևապես և պատժի արդյունավետության հարցը կապված է սոցիալ-տնտեսական և իրավական բնույթի բազմակողմանի և համալիր միջոցառումների իրականացման հետ: Հետևապես, երբ սոցիալ-տնտեսական բնույթի միջոցները մղվում են հետին պլան, դրանք կիրառելու օբյեկտիվ անկարողությունից կամ այլ դրդապատճառներից ելնելով, ապա քրեական պատժը դառնում է պայքարի միակ և հիմնական միջոցը: Այդպիսի միակողմանի պայքարը զուրկ է ամեն տեսակի արդյունավետությունից, և այն վեր է ածվում կույր վրեժի, որի դրսևորումներից մեկն էլ ցմահ ազատազրկումն է:

Ինչ մնում է պատժի թերազնահատմանը կամ գերազնահատմանը, ապա դրանք երկու ծայրահեղություններ են, քանի որ արդարադատությունը պետք է վեր լինի թե ավելորդ վրեժառությունից և թե ավելորդ զբասրտությունից: Նրա հիմնական սկզբունքը պետք է լինի հանցագործին իր կատարած հանցագործության ծանրության աստիճանին համապատասխան արժանվույն ու չափավոր պատիժ նշանակելը: Հասկանալու համար, թե ինչ է նշանակում արժանվույն ու չափավոր պատիժ, պետք է ուսումնասիրել և ցույց տալ մարդկանց բացասական վարքագծի պատճառները և դրանց դեմ տարվող պայքարի էությունը: Երբ որոշ իրավաբաններ չեն ձգտում հասկանալ, որ մարդկանց արատավոր վարքագծի պատճառները կարող են պայմանավորված լինել սոցիալական և անհատական առանձնահատուկ գործոններով ու վարքագծի շեղումները փորձում են բացատրել միայն մարդու մեջ տեղի ունեցած ինչ-որ խախտումներով, ապա առաջարկում են առեղծվ դաժան պատիժների համակարգ: Մինչդեռ ակնհայտ է, որ առաջին հերթին այդ պատճառներն ընդհանուր հարցը պետք է դրվի:

Անձի մեջ հսկայապատասխան վարքագիծ մշակելու նպատակով նրա հոգեբանության և գիտակցության վրա ներգործելու օղակները բազմազան են: Դրանք կարող են լինել պաշտոնական և ոչ պաշտոնական հիմնարկներ ու հաստատություններ: Պաշտոնականի մեջ են մտնում իրավական նորմերը կիրառող մարմինները (դատարան, դատախազություն, ոստիկանություն և այլն), հասարակական և պրոֆեսիոնալ կազմակերպությունները, ոչ պաշտոնականի մեջ՝ ընտանիքը, փոքր խմբերը, ընկերությունները, ընդհանրապես բոլոր հեղինակավոր անձինք և այլն: Կրթության և դաստիարակության, էթիկայի ու բարոյականության նորմերը նույնպես կարող են ներգործել մարդու գիտակցության ու հոգեբանության վրա: Եվ դժվար չէ նկատել, որ այդ օղակների դաստիարակչական դերի բարձրացումը, դրանցում բացասական դրսևորումների վերացումը սերտորեն կապված են հասարակարգի սոցիալ-տնտեսական կարողությունների հետ: Ահա այս բոլորի ամբողջական իրակա-

նացումը կարող է նպաստել թե՛ հանցագործությունների դեմ տարվող պայքարի և թե՛ պատժի արդյունավետությանը: Հաշվի չառնել նշված գործոնները և չափից դուրս հույսեր կապել իրավական վերահսկողության և իրավական դատան արգելքների հետ, նշանակում է հանգել այն գաղափարին, թե «խելացի օրենսդիրը, միանալով լուսավորության հետ, կարող է վերացնել մարդկային բոլոր արատներն ու մոլորությունները»¹¹, որը պարզապես խաբկանք է:

Այսօր եվրոպական և այլ (ԱՄՆ) պետություններում առաջ են քաշվում մարդու վարքագծի կարգավորմանը նվիրված մի քանի տասնյակ տեսություններ, օրինակ, մոտիվացիայի տեսությունը, որի հիմքում ընկած են «խթանում-հակադիսցուսություն», «շարժառիթ-արդյունք» բանաձևը¹², նորմայից շեղվող վարքագծի պատճառների ծագման օրինաչափության տեսությունը¹³, սոցիալական վերահսկողության տեսությունը¹⁴, նորմատիվ տեսությունը, որի էությունը իրավունքի նորմերի միջոցով իրավունքի բովանդակության բացահայտումն է, պատժի երկակիության տեսությունը, ըստ որի, բացի պատժից, պետք է կիրառել նաև հասարակական անվտանգության միջոցներ¹⁵ և այլն: Այս տեսությունները, ուսանելի կողմեր ունենալով հանդերձ, դատապարտվում են ձախողման, հենց որ փորձում են մարդկանց վարքագծի շեղումները բացատրել յուր մարդկանց հոգեկանում տեղի ունեցող շեղումներով և դրանց վերացնելու ուղղությամբ առաջարկում են կամ «հոգեբուժական վիրաբուժություն», կամ պատժի հետ միասին կիրառել նաև սոցիալական անվտանգության միջոցներ: Օրինակ՝ փորձում են ապացուցել, որ մի շարք իրավախախտումների դեպքում՝ խելացի և արդյունավետ մոտեցումը մարդու ուղեղի մեջ «ներթափանցելն է»: Այլ կերպ ասած, մարդու վարքագիծը վերահսկելու հնարավորությունը կապում են «հոգեբուժական տեխնիկայի» լայն կիրառման հետ¹⁶, որն ի վերջո կարող է դառնալ ռեպրեսիաների կիրառման «արդյունավետ» զենք: Եվ, կարծում ենք, չի մոռացվել ոչ վաղ անցյալը, երբ ռեժիմի համար վտանգավոր ճանաչված անձինք տեղավորվում էին հոգեբուժական հիվանդանոցներում, գուցե և նրանց նկատմամբ կիրառելով, այսպես կոչված «հոգեբուժական վիրաբուժություն» ողջ միջոցները: Կամ պըն-ուում են, թե ժամանակակից քրեական իրավունքը հասարակությանը պաշտպանելու և հատուկ նախազգուշական խնդիրները իրականացնելու համար որպես պատժի լրացում պետք է օգտագործի հասարակության անվտանգության միջոցներ: Ընդ որում, այդ միջոցների տակ հասկացվում է բժշկական հիմնարկներում տեղավորելը (ինչպես տեսնում ենք, հեռու չէ «հոգեբուժական վիրաբուժությունից»), նախազգուշական կալանավորումը և այլն, որոնք, ի դեպ, որպես պատժամիջոցներ լայնորեն տարածված էին ֆաշիստական Գերմանիայում¹⁷:

Իհարկե, երբ խոսքը վերաբերում է այնպիսի անձանց, որոնք հանրորեն վտանգավոր արարքներ կատարել են անմեղսունակության վիճակում կամ մինչև դատավճիռ կայացնելը հայտնվել են նման վիճակի մեջ, նրանց նկատմամբ բժշկական բնույթի ներգործության միջոցի կիրառումը բխում է մարդասիրական սկզբունքից: Բայց դա կիրառվում է ոչ թե որպես պատժի լրացում և ոչ էլ որպես կասկածելի թվացող անձին նախազգուշացնելու միջոց, այլ որպես

¹¹ Նույն տեղում:

¹² R. Bolles. Theory of Motivation, N. Y., 1967.

¹³ Օրինակ, Conflict, Decision and Dissonance, Eds. R. Sears, I. Festinger. D. Lawrence. California, 1964.

¹⁴ Г. Ханаф, Социалистическое право и личность, М., 1971.

¹⁵ Տվյալներ տե՛ս Н. В. Лясс, Проблемы вины и уголовной ответственности в современных буржуазных теориях, Л., 1977.

¹⁶ С. Чаровер, Модификация поведения или психотехнический контроль над людьми (Литературная газета, 23.1.1974, с. 14).

¹⁷ Н. В. Лясс, նշվ. աշխ., էջ 58:

բուժում: Նույնիսկ, եթե մեղսունակ չճանաչված, բայց որևէ հիվանդության հետևանքով իր հանցավոր գործունեության նշանակությունը գիտակցելու կամ դրանք ղեկավարելու ընդունակությունը սահմանափակված անձի նկատմամբ օրենքը նախատեսում է պատժի հետ միասին նաև բժշկական բնույթի ներգործության միջոցների նշանակում, դարձյալ հետապնդում է մարդասիրական նպատակ, քանի որ մեղքը քաղելու ընթացքում անձը միաժամանակ ենթարկվում է բուժման:

Սրբ պատժի էությունը և նրա նպատակի հարցը լուծելիս նախապատվությունը տրվում է սոսկ անձի վտանգավորությանը (պակաս վտանգավոր չեն անմեղսունակները, բայց օրենքը սահմանում է բուժում, այլ ոչ թե պատիժ), անտեսելով սոցիալական և այլ գործոնները, որոնց ներգործության արդյունքն է տվյալ անձը, ինչպես նաև արարքի հանրորեն վտանգավորության աստիճանը, ապա ստեղծվում են պատժի ճնշիչ կողմի ուժեղացման հիմքերն ու դրանց վրա հենվող վերը թվարկված տեսությունները: Այս դեպքում արդեն խորթ չեն հնչում ոչ «հոգեբուժական վիրաբուժությունը», ոչ «հասարակության անվտանգության միջոցը», ոչ ցմահ ազատազրկումը և ոչ էլ համանման անմարդկային պատիժները:

Սեր կարծիքով, հիմնավորված չէ նաև արդեն հիշատակված քրեական օրենսգրքի մոդելի 46-րդ հոդվածում առաջարկվող այնպիսի պատժատեսակը, ինչպիսին է կալանավորումը: Կարծես թե այն չի տարբերվում մի ժամանակ գերմանական օրենսդրության մեջ եղած և այժմ «նախազգուշական կալանավորում» վերանվանված պատժատեսակից:

Գերմանիայի քրեական օրենսգրքի (ուժի մեջ է մտել 1978 թ. նոյեմբերին) § 66-ի 3-րդ կետի համաձայն այն անձի նկատմամբ, ով դիտավորյալ արարքի համար դատապարտվում է ազատազրկման՝ երկու տարի ժամանակով, դատարանը դրա հետ միասին նշանակում է նախազգուշական կալանք, եթե՝ 1) սուբյեկտը նախկինում երկու անգամ դատապարտվել է դիտավորյալ արարքի համար ազատազրկման մեկ տարուց ոչ պակաս ժամանակով, 2) նա այդ արարքի համար պատիժը կրել է ազատազրկման ձևով՝ ոչ պակաս երկու տարի ժամանակով կամ նրա նկատմամբ կիրառվել են անվտանգության միջոցներ և 3) սուբյեկտի և նրա արարքի գնահատումը ցույց են տալիս, որ հանցագործության հակված լինելու հետևանքով նա հասարակության համար վտանգավոր է, մասնավորապես, սպառնում է նյութական և հոգևոր բնույթի մեծ վնաս պատճառել:

Ակնհայտ է, որ այստեղ դատարանի հայեցողությանն է թողնվում կանխագուշակելու դատապարտվածի հետագա վարքագիծը, հիմք ընդունելով դատապարտյալի անձի սուբյեկտիվ գնահատականը: Եթե հիշյալ օրենսգրքում գոնե նշվում է, թե ինչու պետք է կիրառվի նախազգուշական կալանավորումը, ապա մոդելի 55-րդ հոդվածում դա էլ չի ակնարկվում: Այս հոդվածում ասված է, որ կալանավորումը անձին խիստ մեկուսացված պայմաններում պահելն է: Այնուհետև նշվում է, որ կալանավորումը նշանակվում է դատարանի կողմից՝ մեկ ամսից 6 ամիս ժամանակով: Բայց ինչու, ի՞նչ հիմքերից ելնելով, ինչպիսի՞ արարքի համար, օրենսդիրն այդ մասին լուծում է: Եթե այստեղ ևս նկատի են ունեցել «նախազգուշական կալանավորում» գերմանական պատժատեսակը, ապա լայն ուղի է ստեղծվում օրինականության խախտումների համար, մի հանգամանք, որն անընդունելի է:

Այն պետությունները, որոնք ի վիճակի չեն բարելավել մարդկանց կեցողությունը, ձեռնարկել համալիր նախազգուշական միջոցառումներ և ընտրել ներգործության այնպիսի միջոցներ, որոնք լինեն թե մարդկային և թե արդյունավետ, դիմում են դաժան կամ անորոշ պատժատեսակների օգնությանը, որոնք ի վերջո իրենց նպատակին չեն ծառայում:

Այսօր, երբ նայում ենք վիճակագրական տվյալներին, ապա տեսնում ենք, որ Հայաստանում հանցագործությունների դեմ տարվող պայքարի վիճակը գնալով բարելավվում է, բարձրացել է նաև հանցագործությունների բա-

ցահայտման մակարդակը¹⁸, մի հանգամանք, որը համարվում է պատժի անխուսափելիությունը ապահովելու գրավականներից մեկը։ Համոզված ենք նաև ժամանակավոր դժվարությունների վերացման մեջ, որը հնարավորություն կստեղծի հանցագործությունների դեմ տարվող պայքարի գործում ձեռնարկել տարբեր միջոցներ։ Հետևապես, պահի ազդեցության տակ «անորոշ» և «ցմահ ազատազրկում» պատժատեսակների ընդունումը, առնվազն կլինեն անմարդկային և, ինչպես նշել ենք, տնտեսապես վնասակար այն կիրառող պետություն համար։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЦЕЛИ НАКАЗАНИЯ

К. А. ЛАЛАЯН

Р е з ю м е

Применение справедливого наказания при совершении преступлений является необходимостью, однако это одно из средств борьбы, но не единственное. Причем, эффективность наказания должна измеряться не его жестокостью, а неизбежностью.

Несомненно, смертная казнь является жесточайшим наказанием, а посему она должна применяться в исключительно ограниченных случаях.

Гуманному принципу наказания строго противопоставляется пожизненное лишение свободы, т. к. оно подвергает человека бесконечным страданиям и мукам и не оправдывает целей наказания. Выбор жестоких неопределенных видов наказания свидетельствует о слабости и несостоятельности данного государства. Принятие таких видов наказания, как «неопределенное» и «пожизненное заключение» не только бесчеловечно, но и экономически ущербно для данного государства.

¹⁸ 1992 թ. համեմատությամբ 1993 թ. Հայաստանում հանցագործությունները նվազել են 3169 դեպքով (16250—13081), 1994 թ. 3158 դեպքով, ԼԲԿ 1992 թ. գրանցված 16250 հանցագործություններից չեն բացահայտվել 8912-ը, ապա 1993 թ. գրանցված 10140-ից՝ 1031-ը է այլն (Տվյալները բերվել են ըստ «02» շարաքաթերթի 1996 թ. փետրվարի 3-ի համարի)։